ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեյցարիայի Դաշնային Հանրապետություն(ԺՆև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Տաթևիկ Ստեփանյան

   Սոֆի Բոստանչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ,

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեյցարիայի Դաշնային Հանրապետություն, ԺՆև

   2024 թվականի հոկտեմբերի 21-ից 23-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի կանանց Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Վերանայելով Պեկինի 30 տարվա պարտավորությունները՝ արագացնելու գենդերային հավասարությունը Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում» թեմայով համաժողովին:

Միջնախարարական հանդիպման նպատակն է եղել ակտիվացնել մասնակից երկրների քաղաքական հանձնառությունները՝ առաջ մղելու գենդերային հավասարությունը և կանանց ու աղջիկների հզորացումը ՄԱԿ ԵՏՀ տարածաշրջանում, և ստեղծել տարածաշրջանային կոնսենսուս առաջնահերթ գործողությունների վերաբերյալ՝ արագացնելով Պեկինի հռչակագրում և գործողությունների հարթակում ստանձնած պարտավորությունների կատարումը:

Համաժողովի նպատակներն են.

1. Գնահատել ԵՏՀ տարածաշրջանում Պեկինի հռչակագրի և գործողությունների հարթակի իրականացման առաջընթացը վերջին հինգ տարիների ընթացքում:

2. Վերանայել առկա և ծագող մարտահրավերները, լավագույն փորձը, քաղած դասերը և առաջնահերթ այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են գենդերային հավասարության և կանանց հզորացման համար՝ նպաստելով 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգի ամբողջական իրականացմանը, ներառյալ գենդերային հավասարության ԿԶՆ 5-ը և բոլոր մյուս ԿԶՆ-ները:

3. Անդամ պետությունների և շահագրգիռ կողմերի համար հարթակ տրամադրել՝ բացահայտելու քաղաքականության տարբերակներն ու ռազմավարությունները, ներառյալ նորարարական մոտեցումներն ու լավագույն փորձը՝ գենդերային հավասարության իրականացման և կանանց հզորացման ուղղությամբ:

4. Ստեղծել տարածաշրջանային կոնսենսուս առաջնահերթ գործողությունների վերաբերյալ՝ արագացնելու համար Պեկինի հռչակագրով և գործողությունների հարթակով ստանձնած պարտավորությունների կատարումը:

5. Համախմբել կանանց կարգավիճակի վերաբերյալ հանձնաժողովի 69-րդ նստաշրջանի տարածաշրջանային ձեռքբերումները, որոնք կենտրոնանալու են Պեկինի հռչակագրի և գործողությունների հարթակի կատարման վերանայման և

գնահատման վրա, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի 23-րդ հատուկ նստաշրջանի արդյունքների հիման վրա:

6. Քննարկված թեմաները.

«Վերանայելով Պեկինի 30 տարվա պարտավորությունները՝ արագացնելու գենդերային հավասարությունը Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում» թեմայով համաժողովը տեղի է ունեցել Ղազախստանի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության համանախագահությամբ, որին ելույթ է ունեցել ավելի քան 43 երկրի պատվիրակ. մասնակցել են նաև տարբեր երկրների նախարարներ, նախարարությունների ներկայացուցիչներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Համաժողովի ընթացքում բանախոսներն ամփոփել են Պեկինի հռչակագրով նախատեսված գործողությունների ուղղությամբ իրականացված աշխատանքները. ներկայացվել է նաև գենդերային ապահովության ոլորտում առկա մարտահրավերները, դրանց կարգավորման ուղղությամբ նախատեսվող քայլերը՝ ներառյալ նորարարական մոտեցումներն ու լավագույն փորձը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը հանդես է եկել ելույթով, որում անդրադարձել է կատարել գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ ՀՀ կողմից սահմանված առաջնահերթություններին ու այդ ուղղությամբ իրականացված աշխատանքներին: Նախարարի տեղակալը նշել է, որ գենդերային բացերը լրացնելու և միջազգային պարտավորությունները կատարելու նպատակով՝ ՀՀ-ն արդեն իսկ պատրաստել է Պեկինի հռչակագրի 30-ամյակի և Գործողությունների պլատֆորմի ազգային զեկույց, որն արտացոլում է նաև գենդերային հավասարության ոլորտում գրանցված առաջընթացը:

Նախարարի տեղակալն ընդգծել է, որ ՀՀ կառավարության ներկայիս քաղաքականությունն ու բարեփոխումները համահունչ են ՄԱԿ-ի 2030 թվականի Կայուն զարգացման նպատակներին. դրանք արտացոլված են նաև ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թ.թ. ռազմավարության նախագծում՝ գենդերային խտրականության հաղթահարման, սոցիալական և տնտեսական ոլորտներում գենդերազգայուն մոտեցումների խթանման, կրթության և գիտության ոլորտում խտրականության դեմ պայքարի և այլ ուղղություններով:

«Որպես ՀՀ կողմից ստանձնած հանձնառություն՝ գենդերային հավասարության ոլորտում իրականացվող աշխատանքները միտված են ապահովելու կանանց առավել լայն մասնակցությունն ու առաջնորդությունը քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքում: ՀՀ կառավարությունը հաստատակամ է նաև գենդերային հավասարությունը խթանելու, գենդերային բացը հաղթահարելու և բոլոր կանանց ու աղջիկներին աջակցելու ամուր և կայուն մեխանիզմներ ստեղծելու իր հանձնառության մեջ»,- նշել է նախարարի տեղակալն իր ելույթի խոսքում:

Համաժողովին հաջորդել են նաև բարձր մակարդակի կլոր սեղան-քննարկումներ, որոնց ընթացքում վերհանվել են ՄԱԿ ԵՏՀ տարածաշրջանում գենդերային հավասարությանը և կանանց հզորացմանն առնչվող առաջնահերթությունները, այդ թվում՝ գենդերային հավասարության դինամիկայի հիմնական միտումների, կանանց տնտեսական հզորացման արագացման, որոշումների կայացման գործընթացում կանանց հավասար և լիարժեք մասնակցության ապահովման ուղղություններով. կարևորվել է նաև կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դադարեցման, գենդերային իրավահավասարության համար ֆինանսավորման լծակների կիրառման, գենդերային բացի լրացման ուղղություններով շարունակական աշխատանքների անհրաժեշտությունը:

Ժնև կատարած աշխատանքային այցի շրջանակում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը և պատվիրակության անդամ, ԱՍՀՆ մարդկանց թրաֆիքինգի և կանանց

հիմնահարցերի բաժնի պետ Սոֆի Բոստանչյանը հանդիպումներ են ունեցել նաև մի շարք երկրների կանանց հիմնահարցերի և գենդերային հավասարության ապահովման ուղղություններով գործունեություն իրականացնող գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Կարևոր է ընդգծել ՄԱԿ-ի համակարգման և ծրագրի արդյունքների, նորմատիվ աջակցության գործադիր տնօրենի տեղակալ Նյարաձայի Գումբոնզվանդայի և ՄԱԿ-ի կանանց Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Բելեն Սանզ Լուկեի հետ հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են կանանց հիմնահարցերի և գենդերային հավասարության ապահովման ոլորտներում ՀՀ հետ համագործակցության ընդլայնման, մասնավորապես՝ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Քննարկման ընթացքում շեշտվել է ջանքերի համատեղման շարունակականության անհրաժեշտությունը՝ ոլորտային առաջընթացի արձանագրման ուղղությամբ: Դիտարկվել են նաև կանանց սոցիալ-տնտեսական հզորացման, կարողությունների զարգացման, դեպի բարձր զբաղունակության ոլորտներ մուտք գործելու նպատակային ծրագրերի իրականացման, ինչպես նաև խնամքի ծառայությունների ընդլայնման նպատակային ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Ֆրանսիան, Պորտուգալիան, Ֆինլանդիան, Շվեյցարիան, Լիտվան, Ղազախստանը և Էստոնիան ներկայացնող տարբեր պաշտոնատար անձանց հետ հանդիպումների ընթացքում Տաթևիկ Ստեփանյանը ներկայացրել է ՀՀ կողմից ոլորտում իրականացված բարեփոխումներն ու նախատեսվող միջոցառումները՝ նշելով, որ պետության քաղաքականության առանցքում շարունակում են լինել գենդերային խտրականության հաղթահարմանը, սոցիալական և տնտեսական ոլորտներում գենդերազգայուն մոտեցումների խթանմանն ուղղված ծրագրերը:

Հանդիպումների ընթացքում հայկական կողմին ներկայացվել է նաև տվյալ երկրների փորձը՝ գենդերային հավասարության ապահովման, ինչպես նաև կանանց ներուժի հավասարակշռված կիրառման ուղղություններով. ընդգծվել է նաև համատեղ

աշխատանքների անհրաժեշտությունը՝ ընտանեկան բռնության, կանանց և աղջիկների իրավազորման աշխատանքների ուղղությամբ:

Էստոնիայի տնտեսական հարցերի և կապի նախարարի տեղակալ Ուլլա Սաարի հետ հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել սոցիալական ոլորտի թվայնացման գործիքակազմերին, որոնք Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներդրել է վերջին տարիներին՝ շեշտադրելով Ընտանեկան բռնության զոհերի հաշվառման հարթակի կարևորությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տարբեր երկրների ղեկավար ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպում-քննարկումների ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություններ՝ աշխատանքային կարգով իրականացված բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվությունների փոխանակում իրականացնել, մասնավորապես գենդերային մեխանիզմների ակտիվացման, ընտանեկան բռնության դեմ պայքարի, ռեաբիլիտացիոն ծրագրերի շրջանակում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Տաթևիկ Ստեփանյան

Սոֆի Բոստանչյան